ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«06» Մայիս 2024թ. ՈՒՄՈ/202-Ա

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 5-րդ կետերով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարների համապատասխան գրությունները (թիվ թիվ 1172, 2373, 1307, 1546, 086-1207, 0631, 02140) և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետի պարտականությունները կատարողի 2024 թվականի մայիսի 3-ի թիվ 1/48/67006-24 գրությունը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Արմավիրի մարզային վարչության պետի 2024 թվականի ապրիլի 29–ի թիվ 32/934 գրությունը, Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 30-ի թիվ 01/30.4/6/2373-2024 գրությունը, հաշվի առնելով մարզի համապատասխան համայնքների հողային հարաբերություններում հնարավոր օրինախախտումների և այդ երևույթները կանխելու համար համարժեք իրավական միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը, ելնելով դրանց նպաստող պայմանները բացահայտելու կարևորությունից, ոլորտում իրավախախտումների դեմ պայքարի ուժեղացման, դրանց կանխման և բացահայտման, այդ ոլորտում տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և իրավապահ մարմինների

համագործակցությունը բարելավելու, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի վարչական տարածքում գտնվող հողային ֆոնդի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման, հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ վերահսկողություն և բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ մշտադիտարկում իրականացնելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ս. Գրիգորյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարների, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետի պարտականությունները կատարողի, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Արմավիրի մարզային վարչության պետի, Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի գրություններով ներկայացված ներկայացուցիչներին (համաձայնությամբ):
3. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ս. Գրիգորյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների ընթացքի մասին յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետին (Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Խ. Մկրտչյանին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-05-06 10:19:59 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2024 թվականի մայիսի 06 -ի
ՆՄՈ/202 -Ա որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝

Սերյոժա Գրիգորյան

Աշխատանքային խմբի անդամներ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ՝

Արմեն Դարբինյան

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ՝

Լիաննա Հարությունյան

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ՝

Արշակ Ղորղանյան

Գլխավոր քարտուղար՝ ***Ա. Հովհաննիսյան***

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 03.05.2024 17:24:50 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023